3844

1912

Краткий отчет по Шамхорской Св. Богородицкой церкви и церковно-приходской школе с 1910/1912

# ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ

## Շամխոռեցոց Ս. Աստուածածին

## Եկեղեցու եւ ծխական դպրոցի

1-ից Յունուարի 1910 ամի—մինչև 1 Դեկտեմբերի 1912 ամի.

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ «Էսպերանտօ» Ելիզ. № 17.
1912

281.6
Հ-20

# ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ

## Տամբոռեցոց Ս. Աստուածածին

### *Եկեղեցու եւ ծխական դպրոցի*

***1-ից Յունուարի 1910 ամի — մինչև 1 Դեկ-տեմբերի 1912 ամի.***


*ԹԻՖԼԻՍ*

*Արագատիպ «Էսպերանտօ» Ելիզ. № 17.*

1912

44174-Ա.Հ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-ом ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

28596-62

# ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## *Հոգաբարձութեան կազմը*

*Հոգաբարձութիւնս իր ամբողջ կազմով ընտրուել է 1909 թուի Նոյեմբեր ամսին. նոյն թուի դեկտեմբերին հաստատուելով պաշտօնի մէջ, անմիջապէս անցել է գործի՝ ընտրելով հետևեալ պաշտօնատար անձանց։*

*Նախագահ հոգաբարձութեան՝ պ. Մնացականեանին, հաշւապահ՝ պ. Եփրեմ Սարգսեան, գանձապահ՝ պ. Հմայեակ Տէր-Յովհաննիսեանը, քարտուղար՝ պ. Գաբրիէլին Գարդիշեան։*

*Գանձապահութիւն մի քանի ամսով կատարել է Գ. Գարդիշեանը, իսկ վերջերս արդէն այդ պաշտօնը յանձնուած է պ. Երեմիա Խաչատուր Տէր-Խաչատրեանին, որի նախորդ Եփրեմ Մկրտումեանը մեզ հետ ընտրուելով և մօտ 1 տարի պաշտօնավարելով, այլ և այլ պատճառներով հրաժարուեց իր պաշտօնից։ Իսկ քարտուղարութեան պաշտօնը 1911 թուի հոկտեմբերից կատարում է դպրոցի աւագ ուսուցիչ պ. Յակոբ Ալիխանեանը։*

*Հոգաբարձութիւնս հաշւետուութեան 3 տարիների ընթացքում ունեցել է 80 նիստ։ Նիստերին բացակայել են հոգաբարձուներից*

*պ. Մ. Մնացականեան . . . 12 անգամ*
*պ. Եփրեմ Սարգսեան . . . 9 անգամ*
*պ. Գ. Գարդիշեան . . . 5 անգամ*
*պ. Հմ. Տէր-Յովհաննիսեան . . 4 անգամ*
*պ. Խ. Տէր-Խաչատրեան . . ոչ մի անգամ*
*(ընտրուել է 1911 թուի Նոյեմբեր ամսին)։*

## *Տնտեսական մասը*

*Հոգաբարձութիւնս իր պաշտօնը ստանձնելու օրից ձեռնամուխ եղաւ գործի և նպատակ դրեց մի կողմից աւելացնել դպրոցի եկամուտները, աւելի լաւ պայմանների մէջ դնել կալուածների շահագործումը, իսկ միւս կողմից աշխատել որքան հնարաւոր է լայն բաց անել դպրոցի դռները աշակերտութեան և յատկապէս աղքատ աշակերտութեան առաջ։*

*Ուսումնականի մասին մենք մի քանի խօսք կասենք ներքևում։ Ինչ վերաբերում է դպրոցի զուտ տնտեսականին պէտք է ասենք, որ հոգաբարձութեանս յաջողուել է մի քանի անհրաժեշտ բարեփոխումներ մտցնել կալուածների*

մէջ և այդպիսով բարձրացնել նրանց քրէհների տիրաժը։ Այսպէս, օրինակ, նորաշէն կրպակներից առաջները հազիւ հազ, անհագին դժւարութիւններով ստացւում էր տարեկան ընդամենը 240 րուբլի, բայց որոշ փոփոխութիւններ մտցնելով, որոնք ի դէպ է ասել, առանձին մեծ ծախք չեն նըստել դպրոցին կամ եկեղեցուն, հոգաբարձութեան յաջողւել է ստանալ այդ կրպակներից տարեկան 360 րուբլի հաստատուն եկամուտ։

Անհրաժեշտ վերանորոգութիւններ կատարւել են նաև միւս շէնքերում, որպիսի հանգամանքը նպաստել է աւելացնելու քրէհները։

Բացի դրանցից, ծխական ժողովի թոյլտուութեամբ շինւել է նաև երկրորդ յարկ եկեղեցու արևելեան կողմը գտնւած միյարկանի շինութեան գլխին։ Այդ շէնքին կից կառուցւել են նաև մանր սենեակներ և խոհանոցներ իրենց նկուղներով։ Ահա այս վերջին նախաձեռնութիւնը դպրոցին տալիս է առ այժմ տարեկան 372 րուբլի յաւելեալ եկամուտ, բայց յաստատ յոյս կայ, որ մէկ տարուց յետոյ այդ եկամուտը կը բարձրանայ և կը հասնի առնւազն 450 րուբլու։

Կալւածների վերաբերմամբ կատարւել են հետևեալ խոշոր վերանորոգութիւնները.

ա. Ներկւել է եկեղեցու տանիքը ամբողջովին, ծախսելով դրա համար մօտ 150 րուբլի։

բ. Հիմնաւորապէս վերանորոգւել է եկեղեցու նախագաւթի տանիքը, ծախսելով 100 րուբլի։

գ. Կատարելապէս փոխւել է կրպակների ամբողջ տանիքը, որովհետև չնայած նոր կառուցւած լինելուն, թիթեղի չափազանց բարակութեան պատճառով բոլորովին անպէտքացել էր և կաթում էր ամբողջ շէնքը։ Ծախսւել է դրա համար 150 րուբլի։

դ. Անց է կացրւած կոյուղի մեր գաւթի ամբողջ երկարութեամբ. շինւել են նաև հիմնաւոր արտաքնոցներ 6 բաժանմունքներով։ Այդ բոլորի համար ծախսւել է ընդամենը մօտ 150 րուբլի։

ե. Տրւել է նախկին տարիներից ապառիկ մնացած պետական և զեմսկի հարկերը մօտ 300 րուբլու չափ։

Մի կողմից դպրոցի ընթացիկ խոշոր ծախսերը, միւս կողմից էլ այս անհագին վերանորոգութիւնները և նոր շինութիւնները պահանջում էին համեմատաբար խոշոր գումարներ, որոնք մեծ մասամբ հնարաւոր եղաւ գտնել և այդպիսով աւելի տանելի պայմաններ ստեղծել թէ դըպրոցի և թէ եկեղեցու համար։

Նախ՝ հետզհետէ բարձրացաւ կալւածների քրէհը. երկրորդ՝ ծխականները իրենք թէև չնչին գումարով, բայց այնուամենայնիւ օգնութեան հասան իրենց ծխական կամաւոր տուրքով. երրորդ՝ նպաստներ եղան Թիֆլիսի այլ և այլ հասարակական հիմնարկութիւններից և որ գլխաւորն է, չորրորդ՝ մասնաւոր անհատներից եղան հետևեալ նւիրաբերութիւնները.—

1. Ալ. Մանթաշեանի ժառանգներից . 1000 ր.
2. Մկրտիչ Մնացականեանից . . . 500 ր.
3. Ռօտինեանի ժառանգներից (Մկր. Մնացականեանի միջոցով) . . 400 ր.

Բացի այս բոլորից հանգուցեալ Թայիրեանի կտակած գումարի հաշւին հնարաւոր եղաւ ստանալ նրա կտակակատար Կոստանդին Ալիխանեանից 1100 րուբլի, իսկ նոյնպէս հանգուցեալ Նունէ Տէր-Ղազարեանի դպրոցի օգտին կտակած գումարից 200 րուբլի։

Ահա գլխաւորապէս այս նւէրներն և անակնկալ մուտքերն էին, որոնք հնարաւորութիւն տւին հոգաբարձութեանս ընթացիկ ծախսերը հոգալուց յետոյ բաւական խոշոր գումարներ ծախսել եկամուտի նոր աղբիւրներ ստեղծելու համար։

Ի վերջոյ Հոգաբարձութիւնս, ի նկատի ունենալով կալուածների ներկայ դրութիւնն ու նրանց տւած արդիւնքը, այն խորին համոզումն ունի, որ արդէն կատարելապէս ապահովւած է դպրոցը իր ներկայ կազմով—3 բաժանմունք—և որ կարելի է նոյն իսկ մտածել արդէն դպրոցը աւելի ընդարձակելու և յաւելեալ դասարան բացելու մասին։

## Ուսումնական մաս.

Հոգաբարձութիւնս իր պաշտօնը ստանձնելու օրը գտել էր դպրոցը բաղկացած 1 բաժանմունքից (ուսման I տարի), 40 աշակերտով։ Հետևեալ տարիները բացւեցին II և III բաժանմունքներն էլ, այնպէս որ այժմ դպրոցը ունի ընդամենը 3 բաժանմունք (ուսման I, II և III տարիներ) 137 աշակերտներով։

Անցեալ՝ $19^{11}/_{12}$ ուս. տարում դպրոցը տւել է 24 շրջանաւարտներ, որոնցից մի քանիսը յաջող քննութիւն տալով ընդունւել են Ներսիսեան դպրոցի Ա. դասարանում (ուսման IV տարի)։

Հոգաբարձութիւնս ի նկատի ունենալով դպրոցի ընդհանուր բարգաւաճման անհրաժեշտութիւնը, աշխատել է ապահովել այն ոչ միայն տնտեսապէս, այլ և բարեկարգել այն և ըստ հնարաւորութեան դարձնել գրաւիչ

ու գեղեցիկ: Թէև այդ տեսակէտից չէ արուած բոլորը և դպրոցը իր ներքին բարեզարդութեան տեսակէտից խոշոր պակասութիւններ ունի, բայց այնուամենայնիւ պէտք է ասել, որ հոգաբարձութիւնս որքան կարելի է միջոցներ չի խնայել նորանոր պատկերներով, ծաղկածուներով և գրքերով հարստացնելու դպրոցը: Կրկնում ենք չէ արուած շատ բան, բայց արդէն ներկայ տնտեսական համեմատաբար բարեյաջող դրութիւնը մտածել է տալիս մեզ, որ մեր յաջորդ հոգաբարձութիւնը արդէն միջոց կունենայ այդ ուղղութեամբ աւելի հաստատուն քայլեր անել և դպրոցը մի քանի տարուց յետոյ շատ աւելի գեղեցիկ վիճակի մէջ դնել:

Հոգաբարձութիւնս ըստ հնարաւորութեան միջոց չի խնայել նաև ընդառաջ գնալու աշակերտութեանը խելացի զւարճութիւն ընձեռելու գործին, որտեղ, ի հարկէ, անհրաժեշտօրէն գտել է ուսուցչական ներկայ կազմի ջերմ աջակցութիւնը: Իւէպ ասենք, որ ուսուցչական խումբը բաղկացած է պ. Յակոբ Ալիխանեանից (աւագ-ուսուցիչ), օր. Մարիամ Թումանեանից, տ. Շուշանիկ Մանուկեանից, պ. Աղէքսանդր Դերզեանից և պ. Միքայէլ Միրզայեանից:

Վերջացնելով իր խօսքը Հոգաբարձութիւնս լիայոյս է, որ յաջորդ հոգաբարձական կազմը կարող կլինի բաւական միջոց գտնել դպրոցը, որ իբրև տղայոց դպրոց միակն է Հաւլաբարի պէս յետամնաց, լոյսի ու գիտութեան կարիք ունեցող թաղամասում, իր կոչման բարձրութեան վրայ կանգնացնել ըստ ամենայնի և իր սահեղծած պայմաններով, գլխաւորապէս IV բաժանմունք բացելով, շրջանաւարտներից ոչ թէ մի քանիսին, այլ համաբեա բոլորին միջոց և հնարաւորութիւն տալ տեղաւորւել Ներսիսեան կամ այլ դպրոցներում:

Նախագահ՝ Մ. Մնացականեան

| | |
|---|---|
| Անդամք Հոգաբարձութեան | Գ. Գարդիշեան<br>Հմ. Տէր-Յովհաննիսեան<br>Եփ. Սարգսեանց<br>Խ. Տէր-Խաչատրեան |

Քարտուղար Յ. Ալիխանեան.

# ՑՈՒՑԱԿ ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ

1. Դպրոցական մեծ շէնք (Преображенская, 21) եկեղեցու արևմտեան կողմը, բաղկացած երեք յարկից, որի վերին յարկում կայ 4 սենեակ, (տեղաւորւած է դպրոցը). միջին յարկում՝ 4 սեն. (տրւած է վարձով). ներքին յարկում՝ 3 նկուղ (2-ը վարձով, 1-ը դպրոցի տրամադրութեան տակ):

2. Նոր վերաշինած երկյարկանի շէնք (Преображенская 21), որի մի մասի տակ կայ երկու նկուղ. վերին յարկն ունի 4 սենեակ 2 խոհանոցով. ներքին յարկը՝ 6 սենեակ: Ամբողջ շէնքը բացի 1 սենեակից, որտեղ ապրում են ժամկոչը և դպիրը, տրւած է վարձով:

3. Դպրոցական շէնքին կից 4 կրպակներ (Уг. Метех. и Преобр. ул.) տրւած է վարձով:

4. Ա. Միրզախանեանի կտակած երկյարկանի տունը (Уг. Мет. ул. и Мет. п.) մէկ նկուղով. վերին յարկում կայ 4 սենեակ, որից երկուսից առ այժմ կտակողի կամքի համաձայն օգտւում են Միրզախանեանի ազգականները, իսկ երկուսն իր խոհանոցով տրւած է վարձով. ներքին յարկն ունի 5 սենեակ, որը ինչպէս և նկուղը տրւած է վարձով:

5. Ա. Թայիրեանի նւիրած տունը (Тучковская ул.) երկյարկանի. վերին յարկում կայ 2 սենեակ, իսկ ներքևում 1 սենեակ. խարխուլ լինելու պատճառով բնակութեան համար արգելւած է:

## Ցուցակ Շամքոռեցոց ծխ. դպրոցի շարժական կայքի առ 1-ն Դեկտեմբերի 1912 թ.

1. Բուսաբանական և կենդանաբանական հին պատկերներ № № 1, 2, 3, 4, 7, 10, 11, 12, 14, 16, 18, 19 և 20։
2. Գարնան, ամրան և ձմրան պատկերներ № № 1, 2, 3 (հին)։
3. Ընտանիքի և գիւղական տան պատկերներ (հին) № № 1 և 2։
4. Վեհ. Մկրտիչ կաթուղիկոսի լուսանկարը շրջանակով.։
5. » Գէորգ Դ-ի » » »
6. Կայսեր և Կայսրուհու գունաւոր պատկերները շրջան.։
7. Վարդան Մամիկոնեանի պատկերը շրջանակով։
8. Տէր-Ղազարեանների լուսանկարները շրջանակներով։
9. Աղէքսանդր Թայիրեանի լուսանկարը շրջանակով։
10. Տիկ. Նատ. Ռոտինեանի լուսանկարը շրջանակով։
11. Աթոռներ 4 հատ, հին ձևի։
12. » 6 հատ վեննական։
13. Երեք հատ պահարաններ։
14. Երկու սեղան, 1-ը ուսուցչանոցի, միւսը դասարանի։
15. Երկու նոր սեղան դասարանների համար։
16. Մէկ սփռոց (կանաչագոյն) ուսուցչ. սեղանի համար։
17. Մէկ համրիչ սեղանի։
18. Մէկ խոզանակ։
19. Ուսուցչ. սեղանի թանաքաման նոր և հին։
20. Մէկ ժամացոյց (պատի)։
21. Շարժական տառեր իրենց պահարանով։
22. Երկու գրատախտակ։
23. Համրիչ դասարանական։



24. Աշակերտ. նստարաններ 20 հատ։
25. » » 22 հատ։
26. Զանգեր (մեծ և փոքր)։
27. Մէկ հատ նկարչական պատւանդան։
28. Մէկ թւաբանական արկղ։
29. Հայաստանի քարտէզ (Գր. Վարդանեանի)։
30. Կիսագնդերի քարտէզ 1 օր.
31. Թիֆլիսի փոքրադիր յատակագիծը։
32. Կրօնական պատկերներ 45 հ. (հին)։
33. Կրօնական պատկերներ 13 հ. (նոր)։
34. Կենդանիների, թռչունների, բոյսերի, ձկների և այլ նոր գունաւոր պատկերներ 92 հ.(1—92)
35. Մարդակազմական ատլաս 1 օր.
36. Գրքեր (մանկական և մեծերի) համաձայն ցուցակի։
37. 1 հատ իրագննական ժամացոյց
38. Մէկ «Ապտեչկա» իր դեղօրայքով։
39. Մէկ հին անգործածելի պահարան։
40. Երկրաչափական մարմիններ 8 հատ։
41. Ջրի տակառ (ցինկից)։
42. Տակառի տակը դնելու մեծ աթոռ։
43. Կախարաններ։
44. Էմալիրովանի բաժակներ (ջրի) 3 հատ։
45. «Գրագէտ» ձեռնարկից I և II մ. կազմած 90 օրինակ։
46. 8 կարտ կօլլէկցիաներ իրենց արկղիկներով։
47. Կաւաման։
48. Մեծ և փոքր լամպաներ։
49. Երկու հատ դոյլ։
50. Ցատակի չոտկ, հին և նոր։
51. Մէկ նաւթի աման։
52. Հաւի, աքաղաղի, կատւի, շան, ագռաւի և աղւէսի կոստիւմներ։
53. Մկրատ մէկ հատ։

54. Պօլիտրաներ 22 հատ։
55. Ոտքերը մաքրելու խոզանակ։
56. Բազկաթոռ մէկ հատ։
57. Երկար նստարաններ երկու հատ։
58. Վիշկայի և բանւորական տան մօդել։
59. Մէկ քանոն։
60. Մէկ կարկին (մեծ)։
61. Հոգաբարձութեան դրոշմ մետաղեայ։
62. Ծխական ժողովների արձանագրութիւնները անկազմ։
63. Մատեան հոգաբարձական արձանագրութիւնների։
64. Մտեալ և ելեալ գրութեանց մատեան։
65. 1909, 10, 11 և 12 թ. ստացած գրութիւններ։
66. Միրզախանեանի կտակի քաղւածքը։
67. Նոր շէնքի յատակագիծը։
68. Մատեան թեմակ. տեսչի նկատողութիւնների։
69. Մի փոքրիկ մէշոկ խորաարդներ (թւաբանական)։
70. Մէկ ջրաման։
71. Մէկ բաժակ։
72. Ս. Սահակի և Մեսրոպի պատկերները։
73. Դպրոցների հաստատման կոնդակը շրջանակով։
74. 3 հատ դասացուցակների շրջանակներ։
75. Երեք հատ փականներ պահարանների և նկուղի համար։
76. Մէկ հատ պրէսս։
77. Աշակերտական թանաքամաններ։
78. Հին անգործածելի սեղաններ։
79. Երկու ջերմաչափ (փչացած)։
80. 1 հատ գլօբուս։
81. 1 հատ վառարան (թիթեղեայ)։
82. 1 հատ Թիֆլիսի մեծադիր քարտէզ։

---

# ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՒԻ

## Տամբոուեցոց Ս. Աստուածածնի

---

## Եկեղեցու եւ ծխական դպրոցի

1910 ամի․

**1-ից Յունուարի 1910 ամի — մինչև 31 Դեկտեմբերի 1910 ամի.**

---

## ՄՈՒՏՔ

### Համառօտ հաշիւ Տամբռուեցոյ Ս. Աս-

| | | |
|---|---|---|
| 1. Մնացորդ առ 1-ն Յունուարի 1910 թ. | | 234 37 |
| 2. Ամբողջ մոմի վաճառումից 6 փ. 18 1/8 գրք. | 662 44 | |
| 3. Կիսայրեալ մոմի վաճառումից 2 փ. 33 գր. | 70 63 | |
| 4. Գանձանակ | 32 52 | |
| 5. Լուսագին մկրտութեան, վարձ դիապարտի, դիասեղանի, ջահերի, խաչահանէք և դռնաբացէք | 210 95 | 976 54 |
| *Կալուածներից* | | |
| 6. Միրզախանեանի կտակած տանից | 417 50 | |
| 7. Նորաշէն կրպակներից | 209 — | |
| 8. Թայիրեանի հին շինութիւնից | 23 90 | |
| 9. Դպրոցական շէնքից | 653 10 | |
| 10. Հին թիթեղի վաճառումից | — 80 | 1304 30 |
| *Փոխանցումն* | | 2515 21 |

*) Ծանօթ.—Մնում է առ 1-ն Յունվարի 1911 ամի 1 փ. 4 գր. մոմ:

## ԾԱԽՔ

### տուածածին եկեղեցու և դպրոցի 1910 ամի.

| | | |
|---|---|---|
| 1. Աւագ պահարանին 7 փ. 22 1/8 գ. մ. | 377 67 | |
| 2. Ռոճիկներ լուսարարին, դպրին, ժամկոչին և պահապաններին | 466 — | |
| 3. Զափաբերական մատեան | 10 — | |
| 4. Տուփ շրջելու համար | 5 90 | |
| 5. Տիրացուների համար շապիկներ և հողաթափեր | 6 93 | |
| 6. Ածուխ, նաւթ, գորգերթափ տալու, շուրջառ նորոգելու, մաշտոց կազմելու, ուռի և այլն | 46 23 | |
| 7. Գաւթի տանիքը վերանորոգելու համար | 62 95 | |
| 8. Կաթուղիկոսի ընդունելութեան և յայտարարութիւնների | 21 — | 996 68 |
| 9. Ապահովագրութիւն հրդեհից 6-ից փետրուարի 1910 մինչև 6 փետրուարի 1911 ամի „Страхов. Общ. Россія“ | 29 39 | |
| 10. Ջրի | 59 66 | |
| 11. Արքունի և հողային հարկ | 49 42 | |
| 12. Քահանաներին Թայիրեանի տան քրէհի 1/3 մասը 1909 ամի | 6 15 | |
| Ռոճիկ դռնապաների | 39 20 | |
| 13. Վերանորոգութիւններ կալուածների | 163 17 | |
| 14. Յովհաննէս Բաբայեանցին ա) պայմանի համաձայն գրաւական | 55 — | |
| բ) պայմանի համաձայն տուգանք | 120 — | |
| 15. Դաւթեանցին արտաքնոցի շինութեան համար | 120 51 | |
| *Փոխանցումն* | 642 50 | 996 68 |

## ՄՈՒՏՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Փոխանցումն. | | | 2515 21 |
| 10. | Թոշակագրամ աշակերտներից . | 605 50 | | |
| 11. | Նուէր Քաղաքային Վարչի ընկերութիւնից . . . . | 100 — | | |
| 12. | Նուէր Տփխիսի ժողովարանից . | 50 — | | |
| 13. | Նուէր Վարդանեանի ժառանգներից | 100 — | 855 50 | |
| | | | | 3370 71 |
| | | | | 3370 71 |

Հոգաբարձութեան անդամներ

## ԾԱԽՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Փոխանցումն. . | 642 50 | 996 68 | |
| 16. | Մինասեանցին կոյուղու շինութեան համար դպրոցի շէնքից մինչև Թարխանեանի տան սահմանը (канализація) 275 մանէթից . | 95 — | 737 50 | |
| 17. | Ռոճիկներ ուսուցիչներին և ծառային . . . . | 1122 68 | | |
| 18. | Վառելափայտ . . . . | 29 20 | | |
| 19. | Լրագրական յայտարարութեանց . | 27 70 | | |
| 20. | Դասարանական պիտոյքներ, թուղթ, թանաք, կաւիճ, օրացոյց, ցուցակներ, գրքեր, տետրներ, «Նոր դպրոց» ու «Հասկեր» ամսագրի բաժանորդագին և այլն . | 105 77 | | |
| 21. | Շրջանակ Վեհափառի կոնդակի համար | 1 20 | | |
| 22. | Տնային դեղարան դպրոցի համար . | 12 — | | |
| 23. | 25 հատ աշակերտական նստարանների վերանորգութեան . . | 64 — | | |
| 24. | 1 հատ նոր սեղան . . . | 3 — | | |
| 25. | Էկսկուրսիա, գրական երեկոյթ, հիւրասիրութիւն և այլն . . | 16 68 | | |
| 26. | Պօլիցիական գրքոյկին, աղբ թափելու և այլ մանր ծախքեր . | 27 59 | 1409 28 | |
| | | | 3144 — | |
| | Մնացորդ առ 1-ն Յունուարի 1911 ամի | | 226 71 | |
| | | | 3370 71 | |

Նախագահ՝ Մ. Մնացականեան
Փոխնախագահ՝ Հ. Տէր-Յովհաննիսեան
Քարտուղար՝ Գ. Գարդիշեան
Հաշուապահ՝ Նիկ. Սարգսեան
Գանձապահ՝ Նիկ. Մկրտումեան

# ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ

## *Տամքոուեցոց Ս. Աստուածածնի*

## Եկեղեցու եւ ծխական դպրոցի

1911 *ամի*

***1-էց Յունուարի 1911 ամի — մինչև 31 Դեկտեմբերի 1911 ամի***

## ՄՈՒՏՔ

Համառօտ հաշիւ Շամքուեցոց Ս. Աս-

| | | |
|---|---|---|
| 1. Մնացորդ առ 1-ն Յունուարի 1911 ամի. . . . . | | 226 71 |
| 2. Ամբողջ մոմի վաճառումից . . | 806 19 | |
| 3. Կիսայրեալ մոմի վաճառումից 3 փ. 7 գր. . . . . | 79 22 | |
| 4. Գանձանակ . . . . | 40 — | |
| 5. Լուսագին մկրտութեան, վարձ դիազարդի, դիասեղանի, ջահերի, խաչհանէք և դռնաբացէք . . | 243 20 | |
| 6. Շամադանների վաճառումից . | 12 — | 1180 61 |
| 7. Կալուածներից ստացած քրէհներ | | 1300 65 |
| 8. Թոշակաւոր աշակերտներից . | 1035 90 | |
| 9. Հանգուցեալ Յով. Թայիրեանցի կտակի հաշւից . . . . | 300 — | |
| 10. $^0/_0{}^0/_0$ Քաղ. Վարկ. Ընկ. օբլիգ. կուպոններով . . . . | 11 87 | |
| 11. Նուէր Քաղաքային Վարկ. ընկերութիւնից . . . . | 100 — | |
| 12. Նուէր Տփխիսի Ժողովարանից . | 75 — | |
| 13. » Մկր. Մնացականեանից . | 500 — | |
| 14. » Հանգուց. Եկ. Ռօտինեանցի ժառանգներից . . . . | 400 — | 2422 77 |
| 15. Ծխական տուրք. | | |
| Մկ. Մնացականեանից . | 30 — | |
| Ն. Միրիմանեանցից. . | 24 — | |
| Փոխանցումն . | 54 — | 5130 74 |

## ԾԱԽՔ

տուածածին եկեղեցու և դպրոցի 1911 ա.

| | | |
|---|---|---|
| 1. Աւագ պահարանին 7 փ. 5 գր. մոմի | 355 87 | |
| 2. Ռոճիկներ լուսարարին, դպրին, ժամակոչին և պահապաններին . | 481 25 | |
| 3. Զափաբերական մասեանններին . | 10 — | |
| 4. Տուփ շրջելու համար . . . | 4 — | |
| 5. Ժամկոչի համար հագուստ . . | 19 03 | |
| 6. Նստարաններ կանանց դասի համար . . . . | 25 — | |
| 7. Գործակալին 1910 ամի . . | 24 — | |
| 8. 20 արշին սատին և 20 արշ. լանկորդ շուրջառների համար . . | 22 23 | |
| 9. Ածուխ, նաւթ, գորգեր թափ տալու, ուռի, յայտարարութ. քահանայի ընտրութեան համար, բժիշկների և այլ ծախքեր . . . . . . . | 124 70 | 1066 08 |
| 10. Ապահովագրութիւն հրդեհից 6-ից փետրուարի 1911 ամի — մինչև 6-ը փետրուարի 1912 ամի Страхов. Общ. „Россія“ . . . | 29 30 | |
| 11. Ջրի . . . . . . | 60 95 | |
| 12. Քահանաներին Թայիրեանի տան քրէհի $^1/_3$ մասը 1910 ամի . . | 8 30 | |
| 13. Մինասեանցին ի հաշիւ կոյուղու. | 180 — | |
| 14. Վերանորոգութիւններ կալուածների | 197 07 | |
| 15. Ռոճիկ դռնապանների . . . | 61 95 | |
| 16. Արքունի և հողային հարկ . . | 242 — | 779 57 |
| Փոխանցումն . . | | 1845 65 |

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ՄՈՒՏՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Փոխանցումն . . | 54 — | | 5130 74 |
| | Ս. Նունուփարեանցից . | 24 — | | |
| | Եփ. Սարգսեանցից . | 10 — | | |
| | Գ. Ռեւազեանցից . | 10 — | | |
| | Եփ. Մկրտումեանցից . | 5 — | | |
| | Տ. Ֆրանգուլեանցից. | 5 — | | |
| | Գ. Ղազարեանցից . | 3 — | | |
| | Վ. Ամիրեանցից . | 3 — | | |
| | Գ. Գարդիշեանցից . | 3 — | | |
| | Յ. Ալիխանեանցից . | 3 — | | |
| | Ա. Ղարիբեանցից . | 3 — | | |
| | Վ. Բաբասեանցից . | 2 — | | |
| | Ս. Յարութիւնեանցից . | 2 — | | |
| | Մ. Տէր-Միքայէլեանցից . | 2 — | | |
| | Հ. Տէր-Աստուածատրեանցից | 1 50 | | |
| | Ա. Տէր- Խաչատրեանցից . | 1 — | | |
| | Ա. Առաքելեանցից . | 1 — | | 132 50 |
| 15. | Մկր. Մնացականեանցից փոխա-<br>գարձաբար . . . . . | | | 200 — |
| | | | | 5463 24 |

Հոգաբարձութեան անդամներ

## ԾԱԽՔ

| | | | |
|---|---|---|---|
| | Փոխանցումն . . | | 1845 65 |
| 17. | Ռոճիկներ ուսուցչական խմբին և ծառային . . . . . | 2073 — | |
| 18. | Վառելափայտ . . . . . | 76 40 | |
| 19. | Գնուած է դասական պիտոյքներ աշակերտների համար, թուղթ, թանաք, կաւիճ, սրբիչ, գրքեր, «Նոր դպրոցի», «Հասկերի» բաժանորդագրութիւն և այլն . . | 181 04 | |
| 20. | 1 հատ վառարան և 1 հատ սեղան | 5 50 | |
| 21. | 1 նկարչական պատւանդան . | 2 — | |
| 22. | 55 օրինակ պատի պատկերներ . | 10 50 | |
| 23. | 8 արկղ կոլլէկցիա . . . | 8 40 | |
| 24. | 50 հատ կենդանաբան պատկերներ և 1 մարդակազմ. ատլաս . | 18 34 | |
| 25. | Թեմական Խորհրդին . . . | 10 — | 2385 18 |
| 26. | Ընթացիկ հաշիւ բացելու համար Թիֆ. II Վարկ. Ընկ. բանկն է մտցրած . . . . . | 10 — | |
| 27. | Գնուած է 12 հատ օբլիգացիաներ Թիֆլ. Քաղաք. Վարկ. Ընկ. . | 1115 11 | 1125 11 |
| | Մնացորդ առ 1-ն Յունւարի 1912 ամի | | 107 30 |
| | | | 5463 24 |

Նախագահ՝ Մ. Մնացականեան
Գանձապահ՝ Հ. Տէր-Յովհաննիսեան
Քարտուղար՝ Գ. Գարդիշեան
Հաշւապահ՝ Եփ. Սարգսեան
Երեցփոխ՝ Խ. Տէր-Խաչատրեան

# ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՒԻ

## Տաճարուեցոց Ս. Աստուածածին

## Եկեղեցու եւ ծխական դպրոցի

*1-ից Յունուարի 1912 ամի — մինչև 30 Նոյեմբերի 1912 ամի.*

**ՄՈՒՏՔ**

**ԾԱԽՔ**

## Համառօտ հաշիւ Տամբռուեցոց Ս. Աստուածածին եկեղեցու և դպրոցի 1912 ամի.

### ՄՈՒՏՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Մնացորդ առ 1-ն Յունվարի 1912 ամի . . . . . . | | | 107 30 |
| 2. | Թոշակադրամ աշակերտներից . | | 1210 50 | |
| 3. | Նուէր Աղէք. Մանթաշեանցի ժառանգներից . . . . | | 1000 — | |
| 4. | Նուէր Տփխիսի Ժողովարանից . | | 75 — | |
| 5. | » Հալաբարի Ժողովրից . | | 60 — | |
| 6. | » Քաղաքային Վարկ. ընկեր. | | 100 — | |
| 7. | » Տ. Սոփեայ Յարութիւնեանցից | | 100 — | |
| 8. | Հանգուցեալ Յովհան. Թայիրեանցի կտակի հաշիւից . . . . | | 800 — | |
| 9. | Հանգուցեալ Նունէ Տէր-Ղազարեանցի կտակի հաշիւից . . | | 200 — | |
| 10. | Ծխական տուրք | | | |
| | Ս. քհն. Իփակեանցից . | 5 — | | |
| | Բժ. Աղամեանցից . . | 5 — | 10 — | |
| 11. | %% օբլիգացիաներից . . | | 76 87 | 3632 37 |
| 12. | Գանձանակ . . . . | | 19 — | |
| 13. | Մոմի վաճառումից . . . | | 793 21 | |
| 14. | 2 փ. $14^{1}/_{2}$ գ. կիսայրեալ մոմից | | 59 08 | |
| 15. | Լուսագին մկրտութեան, վարձ դիագարդի, դիասեղանի, ջահերի, խաչհանէք և ղոնաբացէք . . | | 194 10 | 1065 39 |
| | Փոխանցումն . . | | | 4805 06 |

### ԾԱԽՔ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ռոճիկներ ուսուցիչներին . . | 2342 50 | |
| | Ծառային . . . . | 150 — | |
| 2. | Փայտ դպրոցի համար . . | 15 — | |
| 3. | Գնուած է դասական պիտոյքներ, թուղթ, կաւիճ, թանաք, ցուցակներ և այլն . . . | 100 16 | |
| 4. | 2 հատ քարտէզ . . . | 6 65 | |
| 5. | 8 կօլլէկցեաների համար շրջանակ և ապակի . . . . | 6 80 | |
| 6. | Աթոռ 6 հատ . . . . . | 9 — | |
| 7. | Գնուած է 8 հատ օբլիգաց. Թիֆ. Քաղ. Վարկ. Ընկ. . . . | 684 84 | |
| 8. | Թիֆ. II Փոխ. Վարկ. Ընկ. բանկը մտցրած է ընթացիկ հաշւով . | 19 37 | |
| 9. | Թեմական տեսչի ռոճիկի $^{1}/_{2}$ 1912 ա. | 46 50 | |
| 10. | Մկր. Մնացականեանցին պարտքի դիմաց . . . . . | 200 — | 3580 82 |
| 11. | Ռոճիկներ դպիրներին, ժամկոչին | 336 20 | |
| 12. | Մոմի 7 փութ $17^{1}/_{2}$ գր. . . . | 371 96 | |
| 13. | 2 հատ մատեանի . . . | 10 — | |
| 14. | Վեհափառի ընդունելութեան համար | 15 — | |
| 15. | Գործակալին 1911 թ. հաշւից . | 10 — | |
| 16. | Ածուխի, նաւթի, ուռի ծառին, գործեր թափ տալու և այլն . | 72 23 | 815 39 |
| | Փոխանցումն . . | | 4396 21 |

## ՄՈՒՏՔ

| | | | |
|---|---|---|---|
| | Փոխանցումն . . | | 4805 06 |
| 16. | Կալուածքներից քրէհ . . . | 1142 50 | |
| 17. | Գրաւական Յ. Դանիէլեանցից . | 100 — | |
| 18. | Գրաւական Էմ. Մովսէսեանցից . | 100 — | |
| 19. | Հին թիթեղի վաճառումից . . | 2 40 | |
| 20. | 20 հատ օբլիգացիաների (Թիֆ. Քաղ. Վարկ. Ընկ.) վաճառումից . | 1700 — | |
| 21. | Ներկայացրած է մուրհակ Թիֆլիսի 2 Փոխադարձ Վարկի ընկերութեանը և ստացուած է . | 500 — | 3544 90 |

Մուրհակի ժամանակը լրանում է 23 Մարտի 1913 ամ.։

| | |
|---|---|
| | 8349 96 |

Հոգաբարձուներ

## ԾԱԽՔ

| | | | |
|---|---|---|---|
| | Փոխանցումն . . | | 4396 21 |
| 17. | Страхов. Общ. „Россія“ ապահովագրութեան . . . . | 29 36 | |
| 18. | Ջուր . . . . . . | 38 55 | |
| 19. | Վերանորոգութիւնների . . | 269 24 | |
| 20. | Պահապաններին . . . . | 68 — | |
| 21. | Վճարուած է նոր շինութեան համար որը բաղկացած է<br>I յարկում 2 սենեակ և 2 խոհանոց<br>II » 4 » և 2 » | | |
| | ա). Յ. Դանիելեանցին . . | 2090 — | |
| | բ). Էմ. Մովսէսեանցին . . | 1410 — | |
| | գ). Ճարտարապետին, յատակագծի և մանր ծախքեր . . | 24 — | |
| 22. | Վճարուած է ⁰/₀ 500 ռուբ. մուրհակը զեղջելու համար . . | 20 75 | 3949 90 |
| | Մնում է առ 1-ն Դեկտեմբերի 1912 ամի . . . . . | | 3 85 |
| | Եւ բացի դորանից մնում է ընթացիկ հաշւում . . . | 29 37 | |
| | | | 8249 96 |

| | |
|---|---|
| Նախագահ՝ | Մ. Մնացականեան |
| Գանձապահ՝ | Հ. Տէր-Յովհաննիսեան |
| Քարտուղար՝ | Գ. Գարդիշեան |
| Հաշւապահ՝ | Եփ. Սարգսեան |
| Երեցփոխ՝ | Խ. Տէր-Խաչատրեան |

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ - Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

3844

NL0031167

3722